

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԱՐՄԱՆԻ

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍԵՂՍԱԳԻՐ

ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Երևան – 2026

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

НАЛБАНДЯН АНАИТ АРМАНОВНА

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ПРЕЦЕДЕНТНОГО ПРАВА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В
КОНТЕКСТЕ СУДЕБНО-ПРАВОВЫХ РЕФОРМ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 -
«Теория и история государства и права, история государственных и правовых учений»

Ереван – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Առաջատար կազմակերպություն՝

իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Հովհաննես Միքայելի Ստեփանյան**
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Աշոտ Հայկի Խաչատրյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ **Տարոն Վարդանի Միմոնյան**
ՀՀ ՆԳՆ կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2026 թ. փետրվարի 18-ին, ժամը 16:00-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմին փողոց, 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2026 թ. հունվարի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու՝

Ջ. Ն. Հայրապետյան

Тема диссертации утверждена на заседании Ученого совета Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель:

Официальные оппоненты:

Ведущая организация:

доктор юридических наук,
профессор **Оганес Микаелович Степанян**
доктор юридических наук,
профессор **Ашот Айкович Хачатрян**
кандидат юридических наук,
доцент **Тарон Варданович Симонян**
Академия образовательного комплекса
Министерства внутренних дел РА

Защита диссертации состоится 18 февраля 2026 года в 16:00 на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА, при Российско-Армянском (Славянском) университете (0051, Ереван, ул. Овсепя Эмина, 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки РАУ.

Автореферат разослан 16 января 2026 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук.

Ժ. Ա. Այրապետյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. պայմանավորված է ազգային իրավական համակարգի զարգացման օբյեկտիվ անհրաժեշտությամբ և դատաիրավական բարեփոխումների իրականացման պահանջներով:

Ժողովրդավարացման խորացման պայմաններում ձևավորվում են նոր սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական հարաբերություններ, ամրապնդվում են քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմքերը, իրականացման գործընթացում է 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարության միջոցառումները, միջոցներ են ձեռնարկվում օրինականության և իրավակարգի ամրապնդման, իրավակարգավորումների արդյունավետության բարձրացման ուղղություններով: Նշված գործընթացներում էական դերակատարում ունի դատական իշխանությունը, որի կողմից ընդունվող ակտերը ոչ միայն լուծում են կոնկրետ իրավական վեճեր, այլև կանխորոշում են իրավունքի հետագա զարգացումը, իրավական դրույթների միատեսակ կիրառումը և արդարադատության իրականացման կանխատեսելիությունը:

Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն բարձր դատարանների (ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի) կողմից ձևավորված նախադեպային որոշումները և իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դատական պրակտիկան ընդհանրապես:

Դատական քաղաքականության և դատական պրակտիկայի կայունությունն ու իրավական որոշակիությունը հանդիսանում են ազգային իրավական համակարգի զարգացման, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության և իրավական պետության կայացման կարևոր նախադրյալներ: Մինևս ժամանակ ակնհայտ է, որ միայն նորմատիվ իրավական ակտերը օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով միշտ չէ, որ կարող են ապահովել հասարակական հարաբերությունների լիարժեք և արդյունավետ իրավական կարգավորումը: Օբյեկտիվ գործոններից կարելի է նշել օրենսդրության հետ մնալը հասարակական կյանքի դինամիկ զարգացման գործընթացից, իսկ սուբյեկտիվ գործոններից՝ օրինաստեղծ գործունեության ոչ միշտ կատարյալ բնույթը, որի հետևանքով առաջանում են իրավունքի բացեր, իրավական անորոշություններ և հակասություններ: Նշված խնդիրների հաղթահարման կարևոր գործիք է դատական պրակտիկան և դատական նախադեպային որոշումները, որոնք հնարավորություն են տալիս լրացնել օրենսդրական բացերը, հաղթահարել իրավական անորոշությունները և ապահովել իրավակարգավորումների հետևողականությունը:

Այս պայմաններում դատական իշխանությունը գործառնությամբ առումով հանդես է գալիս ոչ միայն որպես արդարադատություն իրականացնող մարմին, այլև իրականացնում է նորմաստեղծ գործունեություն՝ դատական նախադեպի և դատական պրակտիկայի միջոցով: Վերոնշյալը պայմանավորում է դատական նախադեպի և դատական պրակտիկայի վերաբերյալ առկա տեսական մոտեցումների գիտական ընդհանրացման, դրանց դերի ու նշանակության վերաիմաստավորման անհրաժեշտությունը, ինչը և հիմնավորում է սույն առենախոսական աշխատանքի թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Չնայած իրավակարգավորումների համակարգում դատական նախադեպի և դատական պրակտիկայի կարևոր նշանակությանը՝ հայրենական իրավագիտության մեջ այդ ինստիտուտների համապարփակ տեսական և գործնական ուսումնասիրությունը դեռևս լիարժեք չի ուսումնասիրվել ու համարժեք գնահատվել: Հայկական իրավագիտության մեջ առկա հետազոտությունները հիմնականում անդրադարձել են դատական նախադեպին որպես իրավունքի կամ իրավահայտ աղբյուրի՝ առանց այն դիտարկելու դատական նորմաստեղծ գործունեության համատեքստում: Թեմայի ուսումնասիրության հարցում իրենց ներդրումն ունեն մի շարք հեղինակներ, մասնավորապես՝ Ա. Մկրտումյանը, Ա. Միրզոյանը, Ա.

Հակոբյանը, Ա. Ղամբարյանը Ք. Մարդարյանը և այլք, որոնց աշխատություններում դատական նախադեպի խնդիրը ներկայացվում է առավելապես տեսական կամ իրավահայտ աղբյուրի տեսանկյունից: Սակայն նշված աշխատություններում բացակայում է դատական նախադեպերի իրավական ազդեցության աստիճանակարգման, դրանց պարտադիր կամ պայմանականորեն պարտադիր բնույթի, ինչպես նաև դատական պրակտիկայի համակարգված կիրառելիության խնդիրների համալիր վերլուծությունը:

Անգլալեզու և ռուսալեզու իրավաբանական գրականության մեջ դատական նախադեպի և դատական նորմաստեղծ գործունեության հարցերը ուսումնասիրվել են առավել ընդգրկուն: Մասնավորապես՝ Ռ. Կրոսի, Հ. Հարտի, Օ. Հոլմեսի, Գ. Կլաֆտերի, Ս. Ալեքսևի, Մ. Բագլայի, Գ. Գաջիևի, Վ. Զորկինի, Վ. Լազարևի, Մ. Մարչենկոյի, Բ. Տոպորինի, Վ. Տումանովի և այլ հեղինակների աշխատություններում մշակվել են դատական նախադեպի տեսական հիմքերը, դրա գործառնությունները և դերակատարումը տարբեր իրավական համակարգերում: Այդ ուսումնասիրությունները կարևոր տեսական և մեթոդաբանական հենք են հանդիսացել սույն աշխատանքի համար:

Հետազոտության օբյեկտը ու առարկան. Հետազոտության օբյեկտը դատական նորմաստեղծ գործունեությունը, դատական նախադեպը և դատական պրակտիկան են: Հետազոտության առարկան են հանդիսանում դատական նորմաստեղծ գործունեության, դատահայեցողության, դատական նախադեպի և դատական պրակտիկայի ձևավորման, կիրառման և պարտադիրության հետ կապված տեսական և կիրառական խնդիրները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները. Հետազոտության նպատակն է դատաիրավական բարեփոխումների համատեքստում ուսումնասիրել դատական նորմաստեղծ գործունեության դրսևորումները, դատական նախադեպի և դատական պրակտիկայի դերը, ինչպես նաև բարձր դատական աստիճանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների կիրառելիության առանձնահատկությունները ազգային իրավական համակարգում:

Նշված նպատակին հետամուտ սահմանվել են հետևյալ հիմնական **խնդիրները (հարցադրումները).**

- ուսումնասիրել դատական նախադեպի և դատական պրակտիկայի տեղն ու դերը ազգային իրավական համակարգում,
- բացահայտել դատական նախադեպի և դատական պրակտիկայի էությունն ու բովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց էական տարբերությունները,
- վերլուծել բարձր դատական աստիճանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումների գործառնությունն ու իրավական ազդեցությունը,
- դիտարկել դատական նախադեպը և դատական պրակտիկան որպես դատական նորմաստեղծ գործունեության ձևեր,
- հիմնավորել բարձր դատարանների (վճռաբեկ դատարանի և սահմանադրական դատարանի) իրավական դիրքորոշումների համապարտադրելիությունը դատական և պետական իշխանության մարմինների համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները. Սույն ատենախոսության ընդհանուր մեթոդաբանական հիմքը հանդիսանում է համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, որը հնարավորություն է տալիս դատական նորմաստեղծ գործունեության, դատական նախադեպի և դատական պրակտիկայի երևույթները դիտարկել իրենց փոխկապակցվածության, զարգացման և փոփոխության գործընթացում: Դիալեկտիկական մոտեցումը թույլ է տվել բացահայտել ընդհանուրի և հատուկի, վերացականի և կոնկրետի, կայունության և փոփոխականության փոխհարաբերությունները դատական պրակտիկայի շրջանակում: Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև համակարգային և կառուցվածքա-ֆունկցիոնալ վերլուծության մեթոդները, որոնց միջոցով ուսումնասիրվել

են դատական նախադեպի և դատական պրակտիկայի կառուցվածքային տարրերը, դրանց գործառնությունները և փոխազդեցությունը իրավական համակարգի այլ բաղադրիչների հետ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել համապարփականության սկզբունքին, որը ներառում է ուսումնասիրվող օբյեկտի՝ կոնկրետ դատական նախադեպի կապերն ու հարաբերությունները՝ արդարադատության համատեքստում: Համեմատական-իրավական մեթոդը կիրառվել է դատական նախադեպի ինստիտուտի, ինչպես նաև դատական պրակտիկայի զարգացման առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում բացահայտելու, ինչպես նաև միջազգային փորձի համատեքստում գնահատելու նպատակով: Օգտագործվել են նաև ֆորմալ-իրավական, տրամաբանական և վերլուծական մեթոդները: Վերոնշյալ մեթոդների համակցված կիրառումը թույլ է տվել գիտականորեն հիմնավորել դատական նախադեպի և դատական պրակտիկայի դերակատարումը և ձևակերպել տեսական ու գործնական եզրակացություններ:

Հետազոտության գիտական նորույթը. Սույն ատենախոսության գիտական նորույթը կայանում է դատական նախադեպի ինստիտուտի տեսական և գործնական վերախմաստավորման մեջ՝ հաշվի առնելով ինչպես ժամանակակից իրավական համակարգերի փորձը և ՀՀ դատական պրակտիկայի զարգացման միտումները: Աշխատանքում զարգացվում է դատական նորմաստեղծ գործունեության, դատական նախադեպի և դատական պրակտիկայի համակարգված տեսությունը, ինչպես նաև սահմանվում և ճշգրտվում են դատական նախադեպի հասկացությունը, էությունը, տեսակները և իրավաբանական բնութագրիչները: Առաջարկվում է դատական նախադեպի համալիր գիտական սահմանում, որի շրջանակում դատական նախադեպը դիտարկվում է ոչ միայն որպես իրավունքի կամ իրավահայտ աղբյուր, այլ նաև որպես դատական նորմատեղծ գործունեության դրսևորում, որն ուղղված է իրավական բացերի հաղթահարմանը, իրավական անորոշությունների նվազեցմանը և իրավունքի միատեսակ կիրառման ապահովմանը:

Որպես գիտական նորույթ հեղինակի կողմից առաջարկվում է նաև դատական նախադեպի կիրառելիության, ըստ էության, նոր մոդելային նախագիծ, քանի որ սահմանադրական փոփոխությունների համատեքստում նպատակահարմար է ամրագրել, որ բարձրագույն դատական ատյանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները կարող են ունենալ տարբեր աստիճանի պարտադիր ուժ՝ կախված դրանց բովանդակությունից և գործառնությից: Ատենախոսության շրջանակներում իրականացված տեսական և կիրառական վերլուծության արդյունքներով առաջարկվում է դատական նախադեպերի կիրառելիության աստիճանների գիտականորեն հիմնավորված մոդել, որը նախատեսում է դատական նախադեպերի տարբերակումը՝ կախված դրանց իրավական ուժից, գործառնությից և դատական պրակտիկայի վրա ունեցած ազդեցության ծավալից: Հետազոտության ընթացքում պարզվել է, որ ՀՀ իրավական համակարգում բարձր դատարանների, մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները փաստացի ունեն տարբեր իրավական ազդեցություն, իրավակարգավորումների և դատական պրակտիկայի վրա, սակայն դրանց կիրառելիության աստիճանները նորմատիվ կամ տեսական հստակ դասակարգում չեն ստացել: Արդյունքում առաջանում է իրավական անորոշություն՝ կապված տվյալ իրավական դիրքորոշումների պարտադիր կամ օրինակելի բնույթի գնահատման հետ: Առաջարկվող մոդելի համաձայն՝ դատական նախադեպերը կարելի է բաժանել երեք հիմնական խմբի.

1. Պարտադիր նախադեպեր – իրավական դիրքորոշումներ, որոնք ունեն ընդհանուր և աբստրակտ բնույթ, ուղղված են օրենքի միատեսակ կիրառման ապահովմանը և առանց որոնց տվյալ դատական ակտի ընդունումը իրավաբանորեն անհնար կլիներ (*ratio decidendi*): Այդպիսի նախադեպերը պարտադիր են ստորադաս

դատարանների համար և ենթակա են անմիջական կիրառման նմանատիպ իրավահարաբերությունների դեպքում:

2. Պայմանականորեն պարտադիր նախադեպեր – այն իրավական դիրքորոշումներն են, որոնք ձևավորվել են բարձր դատարանի կողմից, սակայն պայմանավորված են կոնկրետ գործի փաստական հանգամանքներով կամ իրավական միջավայրի տվյալ փուլով: Այդպիսի նախադեպերից շեղումը թույլատրելի է միայն հիմնավորված, հրապարակային և իրավականորեն ստուգելի պատճառաբանությամբ:

3. Ուղեցուցային նախադեպեր – դատական պրակտիկայում ձևավորված այն դիրքորոշումներն են, որոնք չունեն պարտադիր իրավական ուժ, սակայն ծառայում են որպես կողմնորոշիչ դատարանների համար և նպաստում են դատական պրակտիկայի կայունությանն ու կանխատեսելիությանը: Նշված մոդելը թույլ է տալիս սահմանազատել դատական նախադեպերի իրական իրավական ազդեցության սահմանները, նվազեցնել դատական կամայականության ռիսկը և միաժամանակ պահպանել դատավորի անկախության սահմանադրական սկզբունքը:

Առաջարկվող գիտական նորույթը կարող է ծառայել որպես տեսական և գործնական հիմք դատական նախադեպի ինստիտուտի հետագա նորմատիվ և սահմանադրական կարգավորման համար՝ հատկապես դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ազգային իրավունքի զարգացման արդի փուլում բարձր դատարանների (ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի) կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները (դատական նախադեպերի) և դատական պրակտիկան ունեն էական նշանակություն իրավակարգավորումների արդյունավետության, իրավական որոշակիության և օրենքի միատեսակ կիրառման ապահովման, իրավական ու դատական քաղաքականության վերաբերյալ միատեսակ հայեցակարգային ռազմավարության մշակման ու իրացման համար:

2. Դատական նախադեպերի և դատական պրակտիկայի նյութերի ուսումնասիրության համար անհրաժեշտ է որոշակի գիտական ապարատ և մեթոդաբանություն՝ բացահայտելու այդ իրավական երևույթների էությունն ու բովանդակությունը: Այս առումով աշխատանքում առանձնացվում են հետևյալ հետազոտական մեթոդները. դատական նախադեպի և դատական պրակտիկայի գիտական ճանաչողության մեթոդներ, դատական նախադեպի և դատական պրակտիկայի մշակման մեթոդներ, դատական նախադեպի և դատական պրակտիկայի կիրառման մեթոդներ, դատական նորմաստեղծ գործունեության իրականացման գիտատեսական մոտեցումներ և մեթոդներ:

Այս բոլոր մեթոդների համակցությունը հնարավորություն է տվել հեղինակին բացահայտել դատական նորմաստեղծ գործունեության բովանդակությունն ու ձևերը, դրա գիտական հիմնավորվածությունը և կիրառման սահմանները:

3. Հայաստանի Հանրապետության իրավունքի հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտն է՝ որպես ռոմանագերմանական իրավական ընտանիքի անդամ: Սակայն իրական և իրավական կյանքը շատ բարդ ու բազմազան է և օբյեկտիվորեն հնարավոր չէ միայն օրինաստեղծ գործունեությամբ բավարարել ծագած բոլոր իրավական լուծում պահանջող հարցերը: Հետևաբար, ծագող իրավական այն հարցերի պատասխանները, որոնք դեռևս կարգավորված չեն նորմատիվ իրավական ակտերով, դրանք արդյանավետ կարող են լուծվել միայն դատական ակտերի (իրավական դիրքորոշումների, նախադեպերի, դատական պրակտիկայի) միջոցով: Այս առումով գտնում ենք, որ նշված դատական ակտերը կարող են լիովին ճանաչվել իրավունքի լեգիտիմ աղբյուրներ, ինչպես նաև գաղափարական և իրավական հիմք հանդիսանալ օրինաստեղծ գործունեության համար:

4. Դատական նախադեպի նոր գիտական սահմանում ՀՀ իրավակարգի համար: ՀՀ իրավակարգի առանձնահատկություններից ելնելով առաջարկվում է դատական նախադեպի համալիր գիտական սահմանում, որը միավորում է ինչպես տարածաշրջանային, այնպես էլ անգլոսաքսոնական իրավական համակարգերի տարրերը: Նորությը կայանում է նրանում, որ դատական նախադեպը ՀՀ իրավունքում ներկայացվում է որպես հիբրիդային իրավական ինստիտուտ, մինչդեռ նախկինում այն կամ ընդհանրապես չէր սահմանվում, կամ դիտարկվում էր բացառապես որպես օտար իրավական երևույթ:

5. ՀՀ դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ բարձր դատական ատյանների կողմից ձևավորված իրավական դիրքորոշումները ունեն տարբեր աստիճանի պարտադիր ազդեցություն, ինչը պայմանավորում է դատական նախադեպերի կիրառելիության համակարգված մոտեցման անհրաժեշտությունը: Այդ համատեքստում առաջարկվում է դատական նախադեպերի կիրառելիության եռաստիճան մոդել՝ պարտադիր, պայմանականորեն պարտադիր և ուղեցուցային նախադեպերի տարբերակմամբ:

6. Առաջարկվում է սահմանադրական փոփոխությունների ընդունման դեպքում նախատեսել անցումային դրույթներ՝ դատական պրակտիկայի աստիճանական հարմարվողականության ապահովման նպատակով: Մասնավորապես նպատակահարմար է նախադեպերի պարտադիր ուժի կիրառումը նախատեսել որոշակի անցումային ժամկետ անց, կամ նախնական փուլում այն տարածել միայն վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումների վրա: Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ դատական նախադեպի ինստիտուտի սահմանադրական ամրագրումը ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների համատեքստում հանդիսանում է ոչ թե իրավական համակարգին օտար նորամուծություն, այլ իրավական պետության զարգացման տրամաբանական և անհրաժեշտ փուլ:

7. Դատական պրակտիկայի ամփոփ արդյունք հանդիսացող իրավադրույթը (կամ իրավադրույթները) երկարատև գործակցության հետևանքով կարող է ճանաչվել նաև դատական նորմ, որը, ինչպես իրավական նորմը, օժտված կլինի նորմատիվությամբ, համապարտադրելիությամբ, որոշակիությամբ ու կոնկրետությամբ և ուղղված կլինի դատաիրավական հարաբերությունների սուբյեկտների միջև իրավական կարգավորմանը: Այս առումով դատական վերջնական ակտերը կարելի է դասակարգել ըստ իրավաբանական ուժի աստիճանակարգման հետևյալ կերպ՝ դատական նորմ, դատական նախադեպ, իրավական դիրքորոշում, դատական իրավադրույթ և դատական պրակտիկա:

Հետազոտության իրավական և փորձաքարական հիմքերն են. ՀՀ Սահմանադրությունը, սահմանադրական և սովորական օրենքները, ազգային և միջազգային դատարանների նախադեպերը, իրավական դիրքորոշումները, դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը. Ատենախոսության մեջ ամրագրված տեսական դրույթները և եզրակացությունները թույլ են տալիս խորացնել գիտելիքները և պատկերացումները դատական նորմատեղծ գործունեության, դատական նախադեպի, դատական նորմի և դատական պրակտիկայի էության և բովանդակային առանձնահատկությունների մասին: Ատենախոսության հիմնադրույթները կարող են օգտագործվել դատական իշխանության մարմինների համակարգի կատարելագործման և արդարադատության արդյունավետության բարձրացման գործընթացում, այդ թվում՝ դատաիրավական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում:

Աշխատանքի փորձաքննությունը. Մույն ատենախոսական աշխատանքը իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի Պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի են ունեցել աշխատանքի քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության:

Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և առաջադրված խնդիրներով: Ըստ այդմն էլ աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից և դրանցում ներառված ութ ենթագլուխներից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ **«Դատական նախադեպի եվ դատական պրակտիկայի տեղն ու դերը ազգային իրավական համակարգում. տեսության և մեթոդաբանության հիմնախնդիրներ»** վերառությամբ, բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Դատական նախադեպի և դատական պրակտիկայի հասկացությունը, էությունը և դրանց բովանդակային առանձնահատկությունները»** վերնագրով իրականացվում է դատական նախադեպի և դատական պրակտիկայի հասկացությունների համակողմանի տեսական վերլուծություն՝ դրանց իրավաբանական էության բացահայտման և փոխհարաբերությունների սահմանման նպատակով:

Հայաստանի Հանրապետության անցումային շրջանի իրավունքի համակարգում օբյեկտիվորեն ձևավորվում են նոր իրավական ինստիտուտներ ու կատեգորիաներ, ինչը ենթադրում է դրանց ընկալման, մեկնաբանման նոր մոտեցումներ ու ուսումնասիրություններ: Այդ ինստիտուտներից են դատական նախադեպը, դատական պրակտիկան, դատական նորմաստեղծ գործունեությունը, դատական հայեցողությունը և այլն: Այս բոլորը կարևորվում է նաև նրանում, որ դրանք անհրաժեշտ իրավական երևույթներ են մեզանում իրավական պետության կայացման, իրավակարգավորումների արդյունավետության բարձրացման, օրինականության ռեժիմի պահպանման և իրավակարգի ամրապնդման համար:

Դատական նախադեպը կարող է ձևավորվել մեկ կամ մի քանի դատական որոշումների արդյունքում: Դատական նախադեպում արտացոլված իրավական նորմը, ըստ ընդունված կարծիքի, կրում է չգրված բնութագիր, չունի հստակ ձևակերպում, հաճախ անորոշ է և բարդ ձևակերպված:

Ընդհանուր (նախադեպային) իրավունքի երկրներում, որպես կանոն, ընդունվում է «հաստատուն դատական պրակտիկա» հասկացությունը:

Դատական նախադեպի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դժվար է ճիշտ որոշել նրա ուժի մեջ մտնելու պահը, քանի որ այն ձևավորվում է ժամանակի ընթացքում: Ըստ Թ. Բենդիտի կարելի է պնդել, որ որոշակի փուլի ընթացքում այդ (նորմը) գործում է:

Դատական նախադեպի մյուս բնորոշ գիծը կայանում է նրանում, որ նրա ձևավորման առանձնահատկության հետևանքով այն ունի հետադարձ ուժ: Այսպես, դատարանը լուծելով գործը և գտնելով իրավական բացը, ձևավորում է նախադեպային նորմը՝ անցյալի փաստերի վերաբերյալ:

Աշխատանքի առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Դատական նորմաստեղծության հայեցակարգը»** վերնագրով, հանգամանորեն լուսաբանվում է դատական նորմաստեղծ գործունեության բնույթը և բնութագրական հատկանիշները՝ պայմանավորված օրենսդրական բացերի, իրավական անորոշությունների և սոցիալական հարաբերությունների դինամիկ փոփոխությունների պայմաններում իրավական կարգավորման արդյունավետության ապահովման պահանջով:

Չնայած նրան, որ արդի առաջատար իրավական համակարգերում դատական նախադեպը համարվում է իրավունքի աղբյուր, այդուհանդերձ իրավահասկացման տարբեր հայեցակարգերում գոյություն ունեն հակադիր մոտեցումներ: Բնական իրավունքի տեսության կողմնակիցները (Մ. Հեյլը, Բլեկստոնը) չէին ընդունում դատարանի (դատավորի) նորմաստեղծ իրավագործությունը: Նրանք գտնում են, որ պոզիտիվ իրավունքը

ստեղծվում է թագավորի կամ պառլամենտի կողմից, բայց ոչ դատարանի: Մ. Հեյլը և Բլեկստոնը մշակեցին, այսպես կոչված, հռչակագրային տեսություն, որի համաձայն դատավորները իրավունքի ստեղծողներ չեն, այլ «իրավունքի հռչակողներ» են:

Ըստ նրանց, իրավունքը անկախ է դատական հայեցողությունից, այն միայն բացահայտվում և հռչակվում է դատավորների կողմից: Հռչակագրային տեսությունը հսկայական տեսական և գործնական նշանակություն ունեցավ իրավագիտության զարգացման ոլորտում: Կողմնակից լինելով դատական նորմաստեղծ գործունեությանը, սույն աշխատանքի հեղինակը գտնում է, որ դատական նորմաստեղծ գործունեությունը պետք է լինի հիմնավոր փաստարկված և ողջամիտ: Որպես կանոն, դատավորը որոշումն ընդունում է իր ներքին համոզմամբ (հայեցողությամբ), որից հետո միայն հիմնավորում է փաստերի, իրավունքի և ողջամտության տեսանկյունից:

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ **«Նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի հետազոտության ժամանակակից գիտական ու մեթոդաբանական մոտեցումները»** վերնագրով, ներկայացվում են նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի ուսումնասիրման ժամանակակից գիտական ու մեթոդաբանական մոտեցումները՝ որպես իրավական համակարգերի զարգացման և դատական գործունեության վերլուծության կարևոր գործիքներ:

Իրավաբանական գիտության զարգացման գործընթացին հասուկ են ինչպես քանակական, այնպես էլ որակական փոփոխություններ: Իրավաբանական գիտելիքի քանակական փոփոխությունները (դրա բազմապատկումը, հստակեցումը և կոնկրետացումը, դրա ծավալի մեծացումը) տեղի են ունենում ամբողջությամբ իրավունքի այս կամ այն հասկացության դիրքերից և սահմաններում, որն ընկած է իրավագիտության որոշակի հայեցակարգի, դրա մեթոդի ու առարկայի հիմքում:

Իրավաբանական գիտելիքի որակական փոփոխությունները կապված են իրավունքի նախկին հասկացությունից դեպի իրավունքի նոր հասկացության անցման հետ՝ համապատասխան նոր մեթոդով և նոր առարկայով, նոր իրավաբանական տեսության ձևավորման հետ մեկտեղ: Իհարկե, նման որակական փոփոխությունների աստիճանը կարող է լինել տարբեր, սակայն նոր հասկացություններն իրավաբանական ճանաչողության զարգացման գործընթացում և իրավաբանական մտքի առաջընթացի մեջ արտահայտում են որակական թռիչք: Իրավունքի նոր հասկացությունը նշանակում է նաև համապատասխան նոր մոտեցում ինչպես իրավաբանական գիտության օբյեկտների (իրավունքի և պետության), բուն էմպիրիկ տվյալների, այնպես էլ դրանց մասին արդեն կուտակված տեսական գիտելիքների ուսումնասիրման, ըմբռման ու մեկնաբանման հետ կապված: Բանը նրանում է, որ չկա անփոփոխ իմաստ ունեցող գիտելիք, չկա գիտելիքի իմաստի ինչ-որ մի մշտական միավոր, չկա մաքուր գիտելիք՝ դրա իմաստաստեղծ համատեքստից դուրս, չկա մեկուսացված, ինքնավար գիտելիք՝ այս կամ այն արդեն ճանաչողականորեն տված գիտելիքների համակարգից դուրս՝ այդ գիտելիքի իմաստավորման որոշակի տիպով, դրա հասկացողության ու դրա հասկացության որոշակի հայեցակարգով:

Ցանկացած գիտելիք (ներառյալ նաև իրավունքի և պետության մասին գիտելիքը) գոյություն ունի հասկացականորեն կապված, բեկված, միջնորդավորված, դասակարգված, ձևափոխված ու վերափոխված տեսքով, այսինքն՝ որպես տեսության (դրա առարկայի և մեթոդի) որոշակի հասկացության ու համապատասխան հայեցակարգի բաղկացուցիչ մաս: Այստեղից պարզ է, որ մեկ տեսության գիտելիքները չեն կարող ուղղակիորեն և անմիջականորեն ներառվել նոր տեսության կառուցվածքում, որն իրենից ներկայացնում է գիտելիքների նոր հասկացականորեն որոշակի համակարգ (այսինքն՝ գիտելիքների համակարգ, որոնք իմաստավորված ու որոշակիացված են նոր հասկացության տեսակետից):

Աշխատանքի առաջին գլխի չորրորդ ենթագլխում՝ **«Դատական հայեցողության հասկացությունը, էությունը և դերը դատական նախադեպի ու դատական պրակտիկայի ձևավորման գործընթացում»** վերտառությամբ, հեղինակը բացահայտում է դատական հայեցողության էությունը և դերը իրավական կարգավորման արդյունավետության ապահովման գործում:

Դատական նորմաստեղծ գործունեության հիմնական արդյունքների՝ դատական նախադեպերի և դատական պրակտիկայի մշակման գործում էական դերակատարում ունի դատական հայեցողությունը:

XIX դարի վերջերից դատական հայեցողության ընկալման շուրջ գոյություն են ունեցել և այժմ էլ գոյություն ունեն դատավորի ազատության չափի հետ կապված մի շարք տեսություններ: Ընդ որում, «դատական հայեցողություն» երևույթն առկա է բոլոր երկրների իրավական համակարգերում, բայց իրավական հարցերի (կոնֆլիկտների) լուծման հետ կապված տարբեր են դատավորի ազատության չափը որոշելու ընկալումները: Դատավորի ազատության չափը իրավունքի համաշխարհային երկու ընտանիքներում (անգլոսաքսոնական և ռոմանագերմանական) դարձյալ կապված է դատական նախադեպեր ստեղծելու և դրանք որպես իրավունքի աղբյուր դիտարկելու հիմնախնդրի հետ: Եթե ընդհանուր իրավունքում դատավորը կարող է միավորել դատարանի իրավաստեղծ և իրավակիրառ գործառնությունները և ստեղծել նոր նախադեպեր կամ կիրառել նախկինում ընդունված նախադեպը, կամ էլ ընդարձակել կամ նեղացնել վերջինիս բովանդակությունը և գործն իր հայեցողությամբ լուծել ցանկացած մոտեցմամբ (իր ուզած տարբերակով), ապա մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավունքում դատավորը կաշկանդված է գրված օրենքով, նա, այսպես կոչված, «օրենքի ստրուկն» է և կարող է սոսկ ընտրություն կատարել միայն օրենքով նախատեսված մի քանի լուծումների մեջ, գործի հանգամանքները գնահատել, իրավական նորմը մեկնաբանել իր հայեցողությամբ՝ դարձյալ դուրս չգալով օրենքի շրջանակներից: Նա չի կարող շրջանցել օրենքը և իրավական բացը հաղթահարել իր հայեցողությամբ, որը, փաստորեն, իրավունքի նկատմամբ պոզիտիվիստական մոտեցման արդյունք է:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ **«Դատական նախադեպի առանձնահատկությունները ընդհանուր իրավունքի և մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգերում. իրավահամեմատական վերլուծություն»** վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **«Դատական նախադեպի առանձնահատկությունները ընդհանուր իրավունքի համակարգում»** վերնագրով, հանգամանորեն վերլուծության է ենթարկվում դատական նախադեպի ձևավորումն ու կիրառումը ընդհանուր իրավունքի համակարգում՝ որպես իրավունքի հիմնական աղբյուր:

Ընդհանուր իրավունքի ընտանիքը (եվրոպական աշխարհամասում) ներառում է Անգլիայի և այն երկրների իրավունքը, ովքեր հետևում են անգլիական իրավունքի օրինակին: Ընդհանուր իրավունքը ստեղծվել է դատավորների կողմից (թագավորական իշխանության ամրապնդման անհրաժեշտության դարաշրջանում), ովքեր լուծում էին առանձին անձանց միջև ծագած վեճերը: Ընդհանուր իրավունքի նորմը ըստ էության ուղղված է այն բանին, որպեսզի լուծի կոնկրետ խնդիրը, այլ ոչ թե ձևակերպի վարքագծի ընդհանուր կանոն ապագայի համար: Արդարադատության իրականացմանը, դատական գործընթացին, ապացույցներին և անգամ դատական որոշումների կատարմանը վերաբերվող նորմերը այդ երկրների իրավաբանների աչքերում ունեն ոչ պակաս, անգամ ավելի մեծ նշանակություն, քան նյութական իրավունքին վերաբերվող նորմերը:

Ինչպես հայտնի է անգլիական իրավագիտությունը մինչ այժմ զբաղեցրել է ստորադաս դիրք իրավակիրառական գործունեության նկատմամբ և այն կազմված է եղել հիմնականում կուտակված նախադեպերի բազմությունը համակարգելու փորձերից:

Ընդհանուր իրավունքը (Common Law) առաջացել է XII դարում որպես իրավունք, որն ընդհանուր է Անգլիայի բոլոր այն ազատ բնակիչների համար, որոնց վրա տարածվում էր թագավորական դատարանի իրավասությունը:

Նոր համակարգի անվանումը կոչված էր ընդգծել դրա տարբերությունը՝ բազմաթիվ տեղական իրավական սովորույթներից: Ընդհանուր իրավունքը, ինչպես նշել ենք, որպես նորմերի ու սկզբունքների համակցություն, մշակվել էր դատավորների կողմից՝ նշանակված անգլիական Թագի կողմից:

Ժամանակակից ընկալմամբ, ընդհանուր իրավունքը, ամենից առաջ, հակադրվում է ստատուտային իրավունքին, որը ձևակերպվում է ոչ թե դատական, այլ օրենսդրական իշխանությամբ՝ Պառլամենտի կողմից: «Ընդհանուր իրավունք» եզրույթը այսօր օգտագործվում է նրա համար, որպեսզի ընդգծվի այդ իրավունքի զարգացման բնույթը, որում հիմնական դերը խաղում է քրեական ու քաղաքացիական գործերի լուծման վերաբերյալ դատական պրակտիկան:

Համաձայն ժամանակակից անգլիական իրավական դոկտրինայի՝ անգլիական իրավունքի կառուցվածքի համար, ինչպես նաև ռոմանագերմանական իրավունքի կառուցվածքի համար բնութագրական է իրավունքի բաժանումը հանրայինի և մասնավորի: Սակայն անգլիական իրավունքում ճյուղերի ստորաբաժանումը չի հանդիսանում այդքան հստակ և արտահայտված, ինչպես ռոմանագերմանական իրավունքի համակարգով երկրներում, ինչը բացատրվում է կողիֆիկացիոն նորմատիվ իրավական ակտերի բացակայությամբ:

Համալսարանների և դոկտրինայի ազդեցությունը Անգլիայում զգալիորեն ավելի թույլ էր, քան եվրոպական աշխարհամասում, իսկ իրավունքի ընդհանուր վերանայումը երբեք չի իրականացվել օրենսդիր կողմից կողիֆիկացիայի ձևով, դրա համար էլ անգլիական իրավունքը պահպանել է իրավունքի աղբյուրների նկատմամբ իր սկզբնական կառուցվածքն ու ուրվագծերը:

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Նախադեպային իրավունքի տեղն ու դերը մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում»** վերնագրով, համակողմանի քննարկվում է նախադեպային իրավունքի տեղը, նշանակությունը և կիրառման առանձնահատկությունները մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում:

Ի տարբերություն ընդհանուր իրավունքի համակարգի, մայրցամաքային իրավունքում դատական նախադեպի ինստիտուտը, այդ թվում՝ ՀՀ իրավական համակարգում, նոր իրավական երևույթ է, որը գտնվում է իր լինելության և կայացման պրոցեսում:

Այն հանգամանքը, որ մայրցամաքային իրավական համակարգում պարտադրող նախադեպը իրավունքի անկախ աղբյուր չի համարվում, պայմանավորված է ռոմանագերմանական իրավունքի զարգացման մի շարք առանձնահատուկ օբյեկտիվ գործոններով և պատմական զարգացումներով:

Նախ և առաջ դա պայմանավորված է ռոմանագերմանական իրավական համակարգի զարգացման էվոլյուցիայով: Դեռ միջին դարերից նախադեպի իրավունքը խորթ է եղել ռոմանագերմանական իրավական համակարգին: Ռոմանագերմանական համակարգում՝ սկսած 13-րդ դարից և հինգ դար շարունակ, իրավունքը զարգանում էր համալսարանականների և տեսաբանների կողմից՝ ի տարբերություն Անգլիայի, որտեղ իրավունքը զարգանում էր դատարաններում՝ դատավորների ու փաստաբանների կողմից: «Համալսարանականները» տեսաբաններ էին, այլ ոչ թե պրակտիկներ: Իրավական համակարգը կառուցելու գործընթացում դատավորներին ի սկզբանե ապավինելու փոխարեն, ինչպես դա տեղի ունեցավ Անգլիայում, ռոմանագերմանական համակարգում համալսարանականները ընդունեցին արդեն պատրաստի Հռոմեական իրավունքի մոդելը, որը կողիֆիկացված և համակարգված մոդել էր: Լինելով տեսաբաններ՝ համալսարանականները ձգտում էին կատարելության: Նրանց համար ավելի կարևոր էր ոչ թե դատարանում վեճի լուծումը, այլ արդարադատությունը: Նրանք գտնում էին, որ իրավական փորձը պետք է բխի տեսությունից և Օրենսդիրից, և որ դատավորը օրենսդիրի գործառույթներ չպետք է ունենա: Այս ամենի զարգացումը ի վերջո հանգեցրեց Ֆրանսիական կողիֆիկացիայի, որտեղ ընդունվեց իրավունքի՝ որպես առաջնային աղբյուր լինելը՝ ի տարբերություն դատական որոշումների:

Քաղաքացիական իրավունքի դատարանները պարտադրված չեն ընդհանուր իրավունքի *stare decisis* տեսությամբ: Սակայն դրանք ընդունում են *jurisprudence constante* տեսությունը, որը նման է *stare decisis*-ին, սակայն մեկ բացառությամբ, որ *jurisprudence constante* տեսությունը չի պահանջում խստորեն հետևել այն իրավական սկզբունքին, որը մեկ անգամ արդեն կիրառվել է անցյալում:

Վերը նշվածի հիման վրա, առաջարկվում է օգտագործել «հավաքական հաստատուն նախադեպ» արտահայտությունը որպես նշված եզրույթի հայերեն համարժեք՝ հաշվի առնելով ոչ միայն նշված արտահայտության բառացի թարգմանությունը, այլև վերը նշված բացատրությունները և այս արտահայտության «հիմնական միտքն ու առարկան»՝ քաղաքացիական իրավունքի (մայրցամաքային) համակարգում կիրառելիս:

Ամփոփելով նշենք, որ ժամանակակից ռոմանագերմանական իրավական համակարգում նախադեպային իրավունքը աստիճանաբար, սակայն հաստատուն քայլերով իր ուրույն տեղն է ապահովում մայրցամաքային իրավունքի աղբյուրների համակարգում, ինչպես նաև առավել ճկուն է դարձնում իրավակարգավորումները. այդ թվում դատաիրավական հարաբերությունները:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «**Ղատական իշխանության կողմից օրենքների և ղատական պրակտիկայի կիրառման միասնականության ապահովման, օրենսդրական բացերի, անորոշությունների և հակասությունների հաղթահարման հիմնախնդիրները ազգային իրավունքի համակարգում**» վերտառությամբ, բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և ղատական պրակտիկայի միասնականության ապահովման հիմնախնդիրը. տեսական և կիրառական ասպեկտներ**» վերնագրով, վերլուծության է ենթարկվում ՀՀ վճռաբեկ դատարանի դերակատարումը օրենքների և այլ իրավական ակտերի միատեսակ կիրառման, ինչպես նաև ղատական պրակտիկայի միասնականության ապահովման գործում՝ տեսական և կիրառական ասպեկտների համադրությամբ:

Ղատաիրավական բարեփոխումների համատեքստում խիստ կարևորվում է բարձրագույն ղատական մարմնի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները և վերջնական ղատական ակտերը՝ իրավակարգավորումների ոլորտում:

ՀՀ ընդհանուր իրավասության, այդ թվում մասնագիտացված դատարանների համակարգում վճռաբեկ դատարանը առանձնանում է հետևյալ հատկանիշներով. 1) վճռաբեկ դատարանը քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկության և հակակոռուպցիոն հանցագործությունների քննության արդարադատության ոլորտում հանդիսանում է բարձրագույն ատյան, 2) վճռաբեկ դատարանը, օրենքով սահմանված կոնկրետ գործերով ընդունում է վերջնական ղատական ակտ, որը կարող է ունենալ նախադեպային բնույթ, հետևաբար օրինակելի և պարտադիր մյուս ղատական ատյանների համար, 3) Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքների և մյուս նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 4) Վճռաբեկ դատարանը նաև կոչված է ապահովելու ղատական պրակտիկայի միասնականությունը, 5) Վճռաբեկ դատարանը, օրենքով սահմանված կարգով, կոչված է վերացնելու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Մինևույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ «բարձրագույն ղատական մարմին» հասկացությունը ամենևին չի ենթադրում ղատական համակարգի տարբեր ատյանների միջև ղեկավարման կամ ենթակայության հարաբերություններ: Վճռաբեկ դատարանը ՀՀ ղատական համակարգի բարձրագույն ղատական մարմինն է, քանի որ կայացնում է վերջնական բնույթի որոշում՝ վերաքննիչ դատարանի վճիռների, ղատավճիռների և որոշումների վերաբերյալ:

Մեր կարծիքով, ՀՀ վճռաբեկ դատարանի նորմաստեղծ գործունեությունը (այս բառի տեսական և կիրառական իմաստով, բայց ոչ օրենսդրական առումով) իրականացվում է հետևյալ երկու հիմնական եղանակով. ա) օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման եղանակով և բ) դատական պրակտիկայի միասնականության ապահովման եղանակով:

Աշխատանքի երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Դատական իրավամեկնողական նախադեպի և դատական պրակտիկայի դերը ազգային իրավունքի համակարգում օրենսդրական բացերի, անորոշությունների և իրավական հակասությունների հաղթահարման գործընթացում»** վերնագրով, հեղինակը հանգամանորեն բացահայտում է դատական մեկնաբանողական նախադեպի և դատական պրակտիկայի նշանակությունը ազգային իրավունքի համակարգում՝ օրենսդրական բացերի և անորոշությունների վերացման գործընթացում: Ընդգծվում է, որ դատական մարմինների կողմից ձևավորվող մեկնողական մոտեցումները նպաստում են իրավական կարգավորման ամբողջականության, իրավունքի կիրառման կանխատեսելիության և իրավական կայունության ապահովմանը՝ առանց օրենսդրական լիազորությունների փոխարինման:

Իրավակարգավորումների ոլորտում օրենսդրական բացերի, իրավական անորոշությունների, իրավական նորմերի հակասությունների, դրանց ոչ հստակ ձևակերպումների և այլ թերությունների մեծ մասը բացահայտվում է հենց օրենսդրության իրացման (կիրառման), հատկապես՝ դատարանի կողմից կոնկրետ գործերի քննության և լուծման գործընթացում: Հետևաբար, այդ գործընթացն այնպես պետք է կազմակերպվի (ընթանա), որ դատարանը հնարավորություն ունենա այդ բացերը, հակասությունները և մյուս թերությունները հաղթահարելու համար օգտագործել իր կուտակած և արդեն օբյեկտավորված փորձն ու մասնագիտական հմտությունները:

Եզրակացությունում ներկայացվել են մի շարք ընդհանրացումներ, եզրահանգումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին՝

1. Դատական նախադեպի, դատական պրակտիկայի, դատական հայեցողության և դատական նորմաստեղծ գործունեության վերաբերյալ իրավաբանական գիտելիքների որակական փոփոխությունները կախված են ոչ միայն սոցիալ-քաղաքական փոփոխություններից, այլև իրավունքի և իրավունքի աղբյուրների վերաբերյալ ձևավորված դասական պատկերացումների վերաիմաստավորումից և դրանց նոր իրավական ընկալման անցումից, ինչպես նաև դրա հետ փոխկապակցված նոր մեթոդաբանության և իրավաբանական տեսության ձևավորման գործընթացից:
2. Նոր տեսական և մեթոդաբանական մոտեցումները ենթադրում են նաև համապատասխան նոր մոտեցում քննարկվող հասկացությունների էության և բովանդակային առանձնահատկությունների վերաբերյալ, կուտակված էմպիրիկ նյութերի գիտական վերլուծություն, ինչպես նաև դրանց վերաբերյալ ձևավորված տեսական գիտելիքների և հայեցակարգային մոտեցումների վերաիմաստավորում և արժեվորում:
3. Դատական նախադեպը, այդ թվում՝ դասական նախադեպը, իրավամեկնողական նախադեպը, իրավական դիրքորոշումը, դատական պրակտիկան բարձրագույն դատարանների կամային-ինտելեկտուալ գործունեության և էմպիրիկ նյութերի վերլուծության արդյունք են, որոնք ունեն օրինակելի, որոշ դեպքերում նաև պարտադիր նշանակություն դատական համակարգի մարմինների (դատավորների) համար և զբաղեցնում են իրենց ուրույն տեղը իրավունքի աղբյուրների աստիճանակարգում:
4. Դատական նախադեպը, իրավական դիրքորոշումը և դատական պրակտիկան իրենց համակցության մեջ կազմում են, այսպես կոչված, «դատական նորմ», որն օժտված է իրավական նորմին բնորոշ հատկանիշներով՝ նորմատիվությամբ, համապարտադրությամբ, որոշակիությամբ:
5. Դատական հայեցողությունը դատարանի (դատավորի) ազատ դիրքորոշում է գործում առկա իրավաբանական փաստերի գնահատման, օրենսդրական նորմի մեկնաբանման կամ դատական նախադեպի և իրավական

դիրքորոշման մշակման, և վերջապես տվյալ դատական գործով վերջնական որոշման կայացման գործընթացում: Բացի դրանից, դատական հայեցողությունը պետք է բխի դատական քաղաքականության նպատակից և հիմնադրություններից, արդարության արժեքանական մշակույթի ընկալումից և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորություններից ու երկրի սահմանադրական հիմնական դրույթներից:

6. Դատական հայեցողությունը պարունակում է որոշակի սուբյեկտիվիզմի դրսևորում, որը կարող է հանգեցնել նաև իրավաբանական սխալի: Նման իրավակիրառ ռիսկը բացառելու կամ նվազագույնի հասցնելու համար պահանջվում է (դատավարական օրենսդրության և դատավորի վարքագծի կանոնադրային կանոնները) իրավակիրառողի (դատավորի) անաչառություն, կամայականության բացառում, հիմնավորված և հավասարակշռված մոտեցում:

7. Հայաստանի Հանրապետությունում ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպերը, որպես կանոն, կրում են իրավամեկնողական բնույթ (ի տարբերություն դասական՝ անգլոսաքսոնական նախադեպի), լրացնում են իրավունքի բացերը, վերացնում են իրավական անորոշությունները և հակասությունները, ինչպես նաև օրինակելի են առաջին աստիճանի և վերաքննիչ դատարանների համար:

8. Ինչ վերաբերում է դատական պրակտիկային, ապա դրա նյութերը հրապարակվում են տարեկան Վճռաբեկ դատարանի պալատների որոշումների ժողովածուներում, որոնք առայժմ կրում են զուտ ինֆորմացիոն բնույթ, բացակայում են վերլուծական պարզաբանման և ամփոփման նյութերը և, ըստ էության, դրանց տեսական ու գործնական նշանակության աստիճանը ցանկալի կլինի ավելի էական արտահայտվի: Մեր կարծիքով, դրանց գործնական-կիրառական նշանակությունը էական կբարելավվի, եթե օրենսդրական մակարդակով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով կատարվի համապատասխան լրացում կամ փոփոխություն՝ մտցնելով Վճռաբեկ դատարանի գործառության մասով «պլենումի» (դատավորների համաժողովի) ինստիտուտը, որը ոչ միայն կամփոփի տարվա (կամ կես տարվա) դատական պրակտիկայի նյութերը, այլևս պարզաբանումներ կամ մեկնաբանություններ կտա իրավական նորմերի գործադրության, դատական նախադեպերի կիրառման հարցերի վերաբերյալ:

9. Որպես գործնական կիրառական նշանակություն հեղինակի կողմից առաջարկվում է դատական նախադեպերի կիրառելիության տարբեր աստիճանների մոտեցումը ՀՀ-ում՝ պարտադիր, պայմանականորեն պարտադիր և ուղեցուցային նախադեպերի տարբերակմամբ, ինչը թույլ է տալիս հստակ սահմանազատել բարձր դատական աստիճանի իրավական դիրքորոշումների պարտադիր ազդեցության շրջանակները: Պարտադիր նախադեպեր են Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումները, որոնք ուղղված են իրավունքի միատեսակ կիրառման ապահովմանը: Պայմանականորեն պարտադիր նախադեպերից դատարանը կարող է շեղվել միայն իրավական փոփոխությունների, նոր սոցիալական հանգամանքների կամ հիմնավորված իրավական փաստարկների առկայության դեպքում: Ուղեցուցային նախադեպերը չունեն պարտադիր ուժ, սակայն նպաստում են դատական պրակտիկայի կայունությանը և կանխատեսելիությանը:

10. Հետազոտության արդյունքում հեղինակի կողմից առաջարկվում են պայմանականորեն պարտադիր նախադեպերից շեղման իրավաչափության հիմնական չափանիշներ ՀՀ դատական պրակտիկայի համար, որոնք ներառում են օրենսդրական փոփոխությունները, սահմանադրական արդարադատության նոր դիրքորոշումները և հասարակական հարաբերությունների էական փոփոխությունները՝ ապահովելով դատավորի անկախության և իրավական որոշակիության սկզբունքների համադրումը: Նշված մոտեցումը, մեր կարծիքով, թույլ է տալիս նվազեցնել դատական կամայականության ռիսկը՝ միաժամանակ պահպանելով դատավորի անկախության սահմանադրական սկզբունքը:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

ա) Մենագրություններ

1. Ա.Նալբանդյան «Նախադեպային իրավունքի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում», Ստեփանյան Պրինտ Հրատարակչություն, 2024, 136 էջ

բ) Գիտական հոդվածներ

1. Ա.Նալբանդյան «Նախադեպային իրավունքի և դատական պրակտիկայի հետազոտության ժամանակակից գիտական ու մեթոդաբանական մոտեցումները», ՀՀ ՆԳՆ կրթահամալիր, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2024, № 18, 103-109 էջեր,

2. Ա.Նալբանդյան «Դատական նախադեպի և դատական պրակտիկայի հասկացությունը, էությունը և բովանդակային առանձնահատկությունները», Արդարադատության ակադեմիա, «Բանբեր», 2024, № 2, 76-83 էջեր,

3. Ա.Նալբանդյան «Նախադեպային իրավունքի տեղն ու դերը Մայրցամաքային (ռոմանագերմանական) իրավական համակարգում», Սահմանադրական դատարան, «Տեղեկագիր», 2024, № 3 (115), 221-232 էջեր,

4. Ա.Նալբանդյան «ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և դատական պրակտիկայի միասնականության ապահովման հիմնախնդիրը. Տեսական և կիրառական ասպեկտներ» ՀՀ ՆԳՆ կրթահամալիր, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2025, № 19, 166-174 էջեր,

5. Ա.Նալբանդյան «Դատական նորմաստեղծության հայեցակարգի շուրջ», Արդարադատության նախարարություն, «Արդարադատություն» գիտական պարբերական, 2025, № 2 (61), 105-108 էջեր,

6. Ա.Նալբանդյան «Դատական իշխանության հասկացությունը, էությունը և դերը դատական նախադեպի ու դատական պրակտիկայի ձևավորման գործընթացում», ՀՀ ՆԳՆ կրթահամալիր «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2025, № 20, 98-106 էջեր:

Перспективы развития прецедентного права в Республике Армения в контексте судебно-правовых реформ

Резюме

Актуальность темы настоящего исследования обусловлена объективной необходимостью развития национальной правовой системы и требованиями реализации судебно-правовых реформ. В этих процессах особое место занимают прецедентные решения, правовые позиции и судебная практика высших судебных органов (Кассационного суда Республики Армения и Конституционного суда Республики Армения). Стабильность судебных прецедентов и судебной практики, а также правовая определённость являются одними из ключевых предпосылок развития национальной правовой системы, защиты прав человека и становления правового государства.

В Республике Армения судебная власть не ограничивается осуществлением правосудия, но также реализует нормотворческую функцию в форме судебного прецедента и судебной практики. Это обусловлено тем, что нормативные правовые акты по объективным и субъективным причинам не всегда способны обеспечить полное и эффективное регулирование общественных отношений. Законодательство нередко отстаёт от динамики общественного развития, в нём возникают пробелы, неопределённости и противоречия, преодоление которых становится возможным именно посредством судебной практики и правовых позиций высших судов. Вышеизложенное свидетельствует о необходимости научного обобщения существующих подходов и концепций, касающихся судебного прецедента и судебной практики, а также переосмысления их роли и значения в сфере правового регулирования. Научная новизна исследования заключается в том, что на основе полученных результатов разработаны теоретические положения и практические рекомендации, совокупность которых может рассматриваться как эффективное решение исследуемой проблемы и обладает существенной практической значимостью.

В работе выдвигается концепция судебного субъекта, осуществляющего нормотворческую деятельность, который наряду с отправлением правосудия реализует нормообразующую функцию посредством прецедентных решений и правовых позиций. Судебный прецедент рассматривается не как исключительное или вспомогательное явление, а как структурный элемент правовой системы, обеспечивающий её гибкость, устойчивость и предсказуемость.

В исследовании комплексно обосновывается судебный прецедент как вспомогательный источник права, имеющий существенное значение для эффективного правосудия. Доказывается, что судебный прецедент обладает более высокой степенью предсказуемости и юридической определённости, чем изолированное применение нормативных правовых актов, что особенно важно для реализации права на справедливое судебное разбирательство. Предлагается модель степени применимости судебных прецедентов в Республике Армения с их дифференциацией на обязательные, условно обязательные и ориентирующие прецеденты в зависимости от их юридической силы, функционального назначения и степени влияния на судебную практику.

Обязательные прецеденты направлены на обеспечение единообразного применения права и обязательны для нижестоящих судов. Условно обязательные прецеденты допускают отступление лишь при наличии объективно

обоснованных правовых или социальных изменений. Ориентирующие прецеденты не имеют обязательной силы, но способствуют стабильности и предсказуемости судебной практики.

В исследовании обосновывается необходимость формирования в Республике Армения системной модели применимости судебных прецедентов, основанной на их разграничении по степени обязательности. Предлагаемая трёхуровневая модель — обязательные, условно обязательные и ориентирующие прецеденты — позволяет, с одной стороны, обеспечить единообразие правоприменения и правовую определённость, а с другой — сохранить конституционный принцип независимости судьи и возможность развития судебной практики в ответ на изменения общественных отношений и законодательства. Судебная нормотворческая деятельность определяется как правовая позиция или норма, сформированная и принятая высшими судебными органами в результате рассмотрения конкретных дел и обобщения судебной практики за определённый период, которая служит модельным ориентиром для нижестоящих судебных инстанций. В этом контексте окончательные судебные акты могут быть классифицированы следующим образом: судебная норма, судебный прецедент, правовая позиция, правовое предписание и судебная практика. Особенность судебного прецедента заключается в сложности определения момента его вступления в силу, поскольку он формируется постепенно во времени. Другой его характерной чертой является обратная сила: разрешая конкретное дело и выявляя правовой пробел, суд формирует прецедентную норму в отношении фактов, имевших место в прошлом, придавая им новую юридическую квалификацию.

В Республике Армения именно правовые позиции Кассационного суда и Конституционного суда оказывают наибольшее нормативное влияние на судебную практику и правовое регулирование в целом. Можно сделать вывод, что судебная практика относится к сфере правоприменения, тогда как судебный прецедент представляет собой форму нормообразующей деятельности, направленной на формирование нормативных правил, которая в аспекте официального толкования права в Республике Армения возложена прежде всего на Кассационный суд Республики Армения.

Особое внимание уделяется вопросам институционального внедрения обязательности прецедентов в условиях судебно-правовых реформ. В работе обосновывается необходимость использования переходных механизмов, предполагающих поэтапное расширение обязательной силы правовых позиций высших судебных инстанций — прежде всего Кассационного суда и Конституционного суда Республики Армения. В работе подчеркивается, что развитие прецедентного права в Республике Армения носит не заимствованный, а эволюционный характер, обусловленный внутренней логикой трансформации национальной правовой системы. В условиях усложнения общественных отношений и возрастания роли судебной защиты прав человека судебные прецеденты становятся необходимым инструментом обеспечения гибкости и адаптивности правового регулирования, позволяющим правовой системе реагировать на новые вызовы без утраты её нормативной стабильности. В этом контексте судебный прецедент рассматривается также как механизм интеграции международных стандартов прав человека и правовых позиций международных судебных органов в национальную правовую систему. Правовые позиции высших судов Республики Армения позволяют трансформировать эти стандарты в реально применимые нормы внутреннего права, обеспечивая их согласование с Конституцией Республики Армения и принципами национального правопорядка.

В диссертационном исследовании особо подчёркивается, что институционализация судебного прецедента в Республике Армения имеет фундаментальное значение для укрепления доверия общества к судебной системе и для формирования устойчивой правовой среды. Благодаря судебным прецедентам право приобретает не только

формально-нормативный, но и реально действующий характер, позволяющий субъектам планировать своё поведение и оценивать правовые последствия своих действий.

В этом контексте судебный прецедент выполняет не только регулятивную, но и стабилизирующую функцию, способствуя снижению уровня правовой неопределённости и предотвращению произвольного правоприменения. Таким образом, развитие прецедентного права в Республике Армения выступает как важнейший элемент институционального укрепления правового государства и повышения эффективности судебной защиты.

Prospects for the Development of Precedent Law in the Republic of Armenia within the Framework of Judicial and Legal Reforms

Summary

The relevance of the present research topic is conditioned by the objective necessity for the development of the national legal system and the requirements of implementing judicial and legal reforms. Within these processes, a special role is played by precedent-setting decisions, legal positions, and judicial practice of the higher courts, namely the Cassation Court of the Republic of Armenia and the Constitutional Court of the Republic of Armenia. The stability of judicial precedents and judicial practice, as well as legal certainty, constitute essential prerequisites for the development of the national legal system, the protection of human rights, and the establishment of the rule of law.

In the Republic of Armenia, the judiciary not only administers justice but also performs a norm-creating function through judicial precedents and judicial practice. Legislative gaps, ambiguities, and contradictions inevitably arise, and it is through judicial interpretation and precedent-based reasoning that these deficiencies are overcome.

The foregoing demonstrates the necessity of scientifically systematizing existing approaches and concepts related to judicial precedent and judicial practice, as well as reconsidering their role and significance within the sphere of legal regulation. The scientific novelty of the research lies in the development of a coherent theoretical framework and practical recommendations that provide an effective solution to the examined problem and possess substantial practical relevance.

The study advances the concept of a judicial subject exercising norm-creating activity, which, alongside the administration of justice, performs a norm-formative function through precedent-setting decisions and legal positions. Judicial precedent is not treated merely as an auxiliary phenomenon but as a structural component of the legal system that ensures legal continuity, adaptability, and predictability.

The research provides a comprehensive substantiation of judicial precedent as an auxiliary source of law of essential importance for the effective administration of justice. It is demonstrated that judicial precedent contributes to greater legal certainty and foreseeability, which is a core element of the right to a fair trial.

A model of degrees of applicability of judicial precedents in the Republic of Armenia is proposed, differentiating between binding, conditionally binding, and guiding precedents depending on their legal force, functional role, and scope of influence on judicial practice. Binding precedents are aimed at ensuring the uniform application of law and are mandatory for lower courts. Conditionally binding precedents may be departed from only in the presence of objectively justified legal or social changes. Guiding precedents, while not legally binding, contribute to the stability and consistency of judicial practice.

Judicial norm-creating activity is defined as a legal position or norm developed and adopted by higher courts as a result of the adjudication of specific cases and the generalization of judicial practice over a certain period, which serves as a model guideline for lower courts. In this context, final judicial acts may be classified as judicial norms, judicial precedents, legal positions, legal provisions, and judicial practice.

A distinctive feature of judicial precedent lies in the difficulty of determining the moment of its entry into force, as it is formed gradually over time. Another characteristic feature is its retroactive effect: when resolving a case and identifying a legal gap, the court formulates a precedent-based norm with respect to past facts, thereby assigning them a new legal qualification.

In the Republic of Armenia, the legal positions of the Cassation Court and the Constitutional Court exercise the most significant normative influence on judicial practice and legal regulation. This justifies the institutional recognition of judicial precedent as a special element of the system of sources of law in the context of ongoing judicial and legal reforms.

On this basis, it may be concluded that judicial practice belongs to the sphere of law enforcement, whereas judicial precedent constitutes a form of norm-formative activity aimed at creating normative rules, which, in the Republic of Armenia, in terms of authoritative legal interpretation, is primarily entrusted to the Cassation Court.

Special attention is paid to the institutional implementation of binding precedent in the context of judicial and legal reforms. The research justifies the introduction of transitional mechanisms aimed at the gradual extension of the binding force of legal positions adopted by the highest judicial bodies, primarily the Cassation Court and the Constitutional Court of the Republic of Armenia. This approach allows the legal system to avoid abrupt disruptions, reduces the risk of rigid formalism in the application of precedents, and ensures a balanced interaction between legal certainty and judicial discretion.

The study further emphasizes that the development of precedent law in the Republic of Armenia is not a mechanical transplantation of foreign legal models but an evolutionary process driven by the internal dynamics of the national legal system. As social relations become more complex and the role of judicial protection of human rights increases, judicial precedents serve as an essential instrument for maintaining the flexibility and adaptability of legal regulation while preserving the stability of the legal order.

In this context, judicial precedent is also viewed as a mechanism for integrating international human rights standards and the case law of international courts into the domestic legal system. Through the legal positions of the highest Armenian courts, these standards are transformed into practically applicable rules of national law, harmonized with the Constitution of the Republic of Armenia and the fundamental principles of the domestic legal order.

Moreover, the dissertation emphasizes that the institutionalization of judicial precedent in the Republic of Armenia is of fundamental importance for strengthening public confidence in the judiciary and for establishing a stable and predictable legal environment. The consistency, coherence, and foreseeability of the legal positions developed by the Cassation Court and the Constitutional Court create legitimate expectations among legal actors regarding the content and application of the law, which constitutes a core element of the principle of legal certainty. Through judicial precedents, the law acquires not only a formal normative character but also a practical and operative dimension that enables individuals and institutions to plan their conduct and assess the legal consequences of their actions.

In this context, judicial precedent performs not only a regulatory but also a stabilizing function by reducing legal uncertainty and preventing arbitrary law enforcement. Stable and authoritative legal positions of the highest courts limit the risk of fragmented and inconsistent case law, ensure the uniform interpretation and application of legal norms, and thereby strengthen the guarantees for the protection of individual rights and legitimate interests. Consequently, the development of precedent law in the Republic of Armenia serves as a key element in the institutional consolidation of the rule of law and in enhancing the effectiveness of judicial protection.

A stylized, handwritten signature in black ink, likely belonging to the author or a representative of the institution.